«Երևանի Ա.Դ.Սախարովի անվան հ.69 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Խոսենք հայերեն» հեղինակային ուսումնական խմբակի ծրագիր

«Երևանի Ա. Դ. Սախարովի անվան հ. 69 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Խոսենք հայերեն» խմբակի ծրագիր

Ծրագրի նպատակները.

- Ձևավորել գիտելիքներ հայոց լեզվի մասին, բառապաշարի հարստացում և ընդլայնում
- Ձևավորել լսելու և խոսելու, մտքերը հասկանալի ձևակերպելու կարողություններ
- Ձևավորել բառակապակցություններ և նախադասություններ կազմելու կարողություններ
- **Ծրագրի խնդիրները**
- Ուսուցանել բառապաշարի հարստացում իմաստային տարբեր խմբերի բառերով
- Իրականացնել լեզվական տարբեր միավորներ մոդելավորելու կարողություն (բառ, նախադասություն)
- Դրսևորել նախադասությունները միմյանց հետ կապակցելու և իմաստն ընկալելու կարողությունների ձևավորում
- Արտահայտել մտքերը ճիշտ և դիմացինի խոսքը լսելու կարողությունների ձևավորում

Ակնկալվող վերջնարդյունքները.

- Կկարողանա թվարկել իմաստային տարբեր խմբերի բառեր, երկխոսություններ ստեղծել
  Կկարողանա մտքերը ձևակերպել, բառակապակցություն, նախադասություն, խոսք կազմել
- Կիմանա, թե ինչպես նկարներից առանձնացնել մեկ, երկու, երեք վանկերից կազմված բառեր
- Կճանաչի առարկայական նկարները, կանվանի, կնկարագրի, բառակապակցություններ կկազմի
- Կսովորի հաղորդակցվել երկխոսությունների միջոցով

Հատկացվող ընդհանուր ժամաքանակը.

Շաբաթական՝ _____1_____ դասաժամ

Տարեկան՝ _____34_____ դասաժամ

Բովանդակությունը.

N	Ժամ	Ամիս	Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
1	1	Սեպտեմբեր	Ես և իմ ընտանիքը	Ծանոթություն երեխային հոգեհարազատ ընտանե-կան միաջավայրին	Կկարողանա անվանել անդամներին՝ ըստ նկարների
2	1		Իմ տունը	Գաղափար կկազմի բառ, բառակապակցություն, նախադասություն հասկացությունների մասին: Կվերարտադրի նկարի բովանդակությու-նը, կբնութագրի հերոս-ներին ու նրանց արարք-ները:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Կկարողանան խոսքը տրոհել նախադասությունների: Բառերի յուրացում:
3	1		Դպրոցում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. դպրոց, տնօրեն, ուսուցիչ, աշակերտ, դասասենյակ, դասագիրք, նստարան, գրատախտակ, մատյան, կավիճ, կախիչ և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
4	1		Քաղաքում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. մայրաքաղաք, քաղաք, ավտոբուս, պողոտա, հրապարակ, լուսացույց, հետիոտն, գետնանցում, վերնանցում, մետրո, գնացք, շուկա, խանութ, արձան, շատրվան, թանգարան և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
5	1	Հոկտեմբեր	Գույներ	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. ծիածանի գույներ, գեղեցիկ ծաղկաման, կարմիր ծաղիկ, կանաչ վարունգ, գունավոր մատիտներ և այլն:	Կկարողանա անվանել առարկաները, նկարել, գունավորել, նկարագրել և բնութագրել:
6	1		Սովորում ենք հաշվել	Առարկաների համրանք: Ծանոթություն 1-20	Կկարողանան ճանաչել և անվանել 1-20 թվերը,

				թվերին: Ուղիղ և հետ հաշվարկել 1-10	Կկարողանան կատարել ուղիղ և հետ հաշվարկ:
7	1		Գրենական պիտույքներ	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. վրձին, տետր, գրիչ, մատիտ, քանոն, ուսապարկ, գրչատուփ, քարտեզ, գլոբուս, եռանկյունի, պլաստիլին և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
		Նոյեմբեր			
8	1		Տարվա եղանակները: Աշուն	Ծանոթություն տարվա եղանակին և ամիսներին՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, անձրև, ամպրոպ, բերքահավաք,ջրափոս, անձրևոց, դեղնած տերևներ, ոսկեզօծ աշուն:	Կտարբերեն տարվա եղանակները, կճանաչեն ամիսների անվանումները: Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում:
9	1		Տարվա եղանակները: Ձմեռ	Ծանոթություն տարվա եղանակին և ամիսներին՝ դեկտեմբեր, հունվար, փետրվար, Ամանոր, եղևնի, ձյուն, ձնեմարդ, փաթիլներ, վերարկու, սահնակ, չմուշկ, ոտնահետքեր, սառույց, ճնճղուկ և այլն:	Կտարբերեն տարվա եղանակները, կճանաչեն ամիսների անվանումները: Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում:
10	1		Տարվա եղանակները: Գարուն	Ծանոթություն տարվա եղանակին և ամիսներին՝ մարտ, ապրիլ, մայիս, արև, ծիծեռնակներ, թռչունների երամ, տրակտոր, ձնհալ, բողբոջած ծառեր, կանաչ տերևներ, մարգագետին, թռչունների բույն և այլն:	Կտարբերեն տարվա եղանակները, կճանաչեն ամիսների անվանումները: Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում:
11	1		Տարվա եղանակները: Ամառ	Ծանոթություն տարվա եղանակին և ամիսներին՝ հունիս, հուլիս, օգոստոս, ծովափ, հանգիստ, ձկնորսություն, ամառային արձակուրդներ, հատապտուղներ, մրգեր և այլն:	Կտարբերեն տարվա եղանակները, կճանաչեն ամիսների անվանումները: Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում:

12	1	Դեկտեմբեր	Կենդանիներ	Բառերի յուրացում նկարների միջոցով. ընտանի և վայրի կենդանիներ՝ շուն, կատու, հավ, այծ, կով, ոչխար, արջ, առյուծ, կապիկ, գետաձի, օձ և այլն:	Կկարողանա պատասխանել նկարի բովանդակությանը կից հարցերին՝ քանի՞ կենդանի կա կենդանաբանական այգում, ինչպիսի՞ն է օձը, ի՞նչ է անում փիղը և այլն:
13	1		Թռչուններ	Բառերի յուրացում նկարների միջոցով. ընտանի և վայրի թռչուններ՝ հավ, սագ, բադ,աքաղաղ, արծիվ, ագռավ, կաչաղակ, թութակ, բու, սոխակ, սիրամարգ, կտուց, թևեր, փետուրներ, ճանկեր և այլն:	Կկարողանա պատասխանել նկարի բովանդակությանը կից հարցերին: Բառերի յուրացում:
14	1		Շնորհավոր ծննդյան օր:	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. շնորհավորանքներ, փուչիկներ, տորթ, մոմեր, թվեր, հրավառություն, հյութ, կոնֆետներ, տոնական գլխարկներ, նվերներ, ծաղիկներ, ծաղրածու և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
15	1		Ամանոր	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. շնորհավորանքներ, տոնածառ, խաղալիքներ, Ձմեռ պապ, Ձյունանուշ, ձյուն, փաթիլ, տոնական գլխարկներ, նվերներ և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
16	1	Հունվար	Հագուստ: Կոշիկ:	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. բաճկոն, գլխարկ, հողաթափեր, կոշիկներ, ձեռնոց, տաբատ, վերարկու, փողկապ, բաճկոնակ և այլն:	Բառերի յուրացում: Կսովորեն տարատեսակ հագուստների անվանումները:
17	1	Հունվար	Ձմեռային խաղեր	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. սահնակ, չմուշկ, դահուկ, ձնագնդի, ձնե-	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:

				մարդ, սառույց, մրսել, ցուրտ և այլն:	
18	1		Ջեռուցում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. վառարան, փայտ, կրակ, վառել, ցուրտ, տաք և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
19	1	Փետրվար	Բանջարանոց	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. ջերմոց, մարգ, փոցխ, բահ, սմբուկ, ձմերուկ, կաղամբ, սխտոր, լոլիկ, ոլոռ, զամբյուղ,արկղ և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
20	1		Այգի	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. ծառերի տեսակները և պտուղները՝ տանձենի, բալենի, խնձորենի, նռնենի, ծիրան, կեռաս, սալոր, թուզ, դեղձ և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ, նկարագրել իրենց սիրած պտուղն ու նշել գույնը: Բառերի յուրացում:
21	1		Բակում: Գաղափար գոյականի մասին:	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. շուն, շան բույն, տանիք, բակ, ծխնելույզ, ավտոմեքենա, ցանկապատ և այլն:	Մեծադիր նկարի վրա կկարողանան ցույց տալ համապատասխան բառերը: Բառերի յուրացում:
22	1		Ինչպիսի՞… Գաղափար ածականի մասին:	Հոմանիշ և հականիշ հասկացությունների միջոցով համեմատել առարկաները՝ մեծ տուն – փոքր տուն, քաջ զինվոր- վախկոտ թշնամի,բարի փերի -չար կախարդ և այլն:	Կկարողանան ածականները ճիշտ կիրառել բանավոր խոսքում և համեմատել առարկաները ըստ հատկությունների: Բառերի յուրացում:
23	1	Մարտ	Ի՞նչ ենք անում: Գաղափար բայի մասին:	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. դուռը թակել, մտնել, քայլել, պարել, սահել, նկարել, վազել,լվացվել, թռչել և այլն:	Կկարողանան բայերը ճիշտ կիրառել նախադասությունների մեջ: Բառերի յուրացում:
24	1		Առավոտյան	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. զարթուցիչ,	Կիմանան, կսովորեն հիգիենայի կանոնները: Բառերի յուրացում:

				մարմնամարզություն, սառը լոգանք, լոգասենյակ,նախաճաշ, ատամի մածուկ, սանր, սրբիչ և այլն:	
25	1		Խոհանոցում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. խոհանոց, սառնարան, ափսեներ, կաթսաներ, հաց, դանակ, աթոռ, ծորակ և այլն:	Բառերի յուրացում: Պատասխանել հարցերին. Ո՞վ է նա: Ի՞նչ է սա:
26	1	Ապրիլ	Ընթրիք (նախաճաշ, ճաշ)	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. ընթրիք, երեկո, ընտանիքի անդամներ, զրույց, ափսե, դանակ, պատառաքաղ, բաժակ և այլն:	Կծանոթանան սպասքի պարագաներին և դրանց կիրառությանը: Բառերի յուրացում:
27	1		Մարդ	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. մարմնի մասեր՝ մազեր, աչքեր, հոնքեր, գլուխ, ձեռք, ոտք, ծունկ, մորուք և այլն:	Կկարողանան կազմել բառակապակցություններ և նախադասություններ: Բառերի յուրացում:
28	1		Թատրոնում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. թատրոն, բեմ, վարագույր, ընդմիջում, տոմս, դրամարկղ, դերասաններ, հանդիսատես և այլն:	Կկարողանան կազմել պատմություն: Բառերի յուրացում:
29	1		Կինոյում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. կինոթատրոն, նախասրահ,դրամարկղ, տոմս, հսկիչ, դահլիճ, էկրան, հերոսներ և այլն:	Կկարողանան կազմել պատմություն: Բառերի յուրացում:
30	1	Մայիս	Կրկեսում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. կրկեսի ասպարեզ, ծաղրածու, աճպարար, մարմնամարզիկ, կենդանիներ և այլն:	Կկարողանան կազմել նախադասություններ, պատմություն: Բառերի յուրացում:
31	1		Խանութում:	Բառերի և տիպային ար-	Կկարողանան կազմել

			Դեղատանը:	տահայտությունների յուրացում. քաղաքավարի հաղորդակցություն՝ բարև, խնդրում եմ, բարի եղեք, շնորհակալություն, ցտեսություն և այլն:	նախադասություններ, երկխոսություն: Բառերի յուրացում:
32	1		Մասնագիտություններ	Հարցերի պատասխաններ. ի՞նչ մասնագիտություններ գիտես: Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. շինարար, բժիշկ, խոհարար, պատշար, նկարիչ, նավաստի, օդաչու և այլն:	Կկարողանան կազմել նախադասություններ, պատմություն: Բառերի յուրացում:
33	1		Անտառում	Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. անտառ, թփեր, ծառեր, ճյուղեր, բու, աղվես, սկյուռիկ, մասրենի և այլն:	ՏՀՏ ցուցադրությամբ կծանոթանան անտառի բնակիչներին և գաղտնիքներին: Բառերի յուրացում:
34	1		Հանգիստ բնության գրկում:	Հարցեր պատասխաններ: Բառերի և տիպային արտահայտությունների յուրացում. ծով, նավակներ, երեխաներ, ծնողներ, արևայրուք ընդունել և այլն:	Կկարողանան հարց-պատասխանի միջոցով կազմել երկխոսություն: Բառերի յուրացում: